Հավելված
ՀՀ կառավարության 2011 թվականի
մայիսի 26-ի N 734 -Ն որոշման

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց

ԴԵՂԵՐԻ ՊԱՏՇԱՃ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԴՆԵԼՈՒ ԵՎ ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

N N ը/կ	Միջոցառումները	Պատասխանատու կատարողը	Կատարման ժամկետը	Ֆինանսավոր-ման աղբյուրը
1.	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-րության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտա-կան կենտրոն» փակ բաժնետիրա-կան ընկերության կազմում պատ-շաճ արտադրական գործունեու-թյան և պատշաճ բաշխման գործու-նեության (այսուհետ՝ ՊԱԳ/ՊԲԳ) փորձագիտական բաժնի ստեղծում	ՀՀ առողջապահության նախարարություն	2011 թ. հունիս	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
2.	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-րության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտա-կան կենտրոն» փակ բաժնետիրա-կան ընկերության ՊԱԳ/ՊԲԳ փորձագիտական բաժնի գործու-նեության համար անհրաժեշտ որակի կառավարման համակարգի (գործունեության ստանդարտ ընթացակարգերի, ձևաթղթերի, որակի պատասխանատուների սահմանում և այլն) ներդրման ծրագրի և անհրաժեշտ իրավական ակտերի ցանկի հաստատում	ՀՀ առողջապահության նախարարություն	2011 թ. հունիս	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
3.	Միջազգային համապատասխան կառույցներին (Առողջապահության համաշխարհային կազմակերպու-թյուն «Դեղագործական արտա-դրանքի հավաստագիր», «Դեղագործական տեսչության	ՀՀ առողջապահության նախարարություն	2011 թ. հունիս	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ

	համագործակցության սխեմա» և այլ) անդամակցության հայտ ներկայացնելու ծրագրի հաստատում			
4.	«Դեղերի արտադրության լիցեն-զիաներ տրամադրելու նպատակով փորձաքննության իրականացման լիցենզավորման կարգը հաստա-տելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	2011 թ. սեպտեմբեր	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
5.	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-թյան «Դեղերի և բժշկական տեխ-նոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կադրային ներուժի հզորացում, փորձագետների շարու-նակական վերապատրաստում	ՀՀ առողջապահության նախարարություն	2011-2012 թթ.	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
6.	ՊԱԳ-ի համակարգի ներդրման համար անհրաժեշտ իրավական ակտերի մշակում և հաստատում	ՀՀ առողջապահության նախարարություն	2011-2012 թթ.	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
7.	Տեղական դեղարտադրության ՊԱԳ-ի կանոններին համապատաս-խանության գնահատման նպատա-կով ՀՀ առողջապահության նախա-րարությունում խորհրդակցություն-ների կազմակերպում տեղական դեղարտադրողների, միջազգային համապատասխան կառույցներից հրավիրված փորձագետների հետ, ինչպես նաև համատեղ ուսումնա-սիրությունների կազմակերպում, անհրաժեշտության դեպքում տեղա-կան արտադրողներին միջազգային համապատասխան կառույցների կողմից «Դեղագործական արտա-դրանքի հավաստագիր» տրամա-դրելու նպատակով	ՀՀ առողջապահության նախարարություն	մինչև 2011թ. օգոստոս և ընթացիկ	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
8.	«Դեղերի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	2011 թ. դեկտեմբեր	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
9.	Պատշաճ բաշխման գործունեու-	ՀՀ առողջապահության	2011 թ.	պետական

	թյան (ՊԲԳ) վերաբերյալ իրավա-կան ակտի նախագծի մշակում	նախարարություն	նոյեմբեր	բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
10.	«Պատշաճ բաշխման գործունեու-թյան (ՊԲԳ) հավաստագրի տրա-մադրման և վերանայման կարգը և հավաստագրի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	2012 թ. առաջին կիսամյակ	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
11.	Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման վերա-նայում և անհրաժեշտության դեպ-քում փոփոխությունների ու լրացում-ների նախագծի մշակում և ներկա-յացում ՀՀ կառավարություն	ՀՀ առողջապահության նախարարություն	2011 թ. հոկտեմբեր	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
12.	Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 25-ի N 347 որոշման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2006 թվականի փետրվարի 7-ի N 123-Ն հրամանի վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների իրականացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2011 թ. հուլիս	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
13.	Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի N 581 որոշման վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների և լրացումների նախագծի մշակում	ՀՀ առողջապահության նախարարություն	2011 թ. նոյեմբեր	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ
14.	Եվրամիության ուղեցույցների համաձայն ներպետական օրենս-դրության վերանայում և իրավական ակտերի նախագծերի մշակում և ընդունում	ՀՀ առողջապահության նախարարություն	2014 թ. հունվար	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ

15.	Միջազգայնորեն ընդունված եղանակներով համագործակցության և տեղեկատվության փոխանակման համար համապատասխան կառույցներին անդամակցության հայտի (Առողջապահության համաշխարհային կազմակերպություն «Դեղագործական արտադրանքի հավաստագիր», «Դեղագործական տեսչության համագործակցության սխեմա» և այլ) ներկայացում	ՀՀ առողջապահության նախարարություն	2014 թ. հունվար	պետական բյուջեով նախատեսված միջոցներ և այլ ֆինանսավորման աղբյուրներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ